


ԻՆՉ ԿԸ ՄՏԱԾԵ ՄԻԻՍ ԹՈՒՐՔԸ

Posted on March 12, 2011 by Keghart




Category: [Opinions](#)




 Փրոֆ. Պասքըն Օրան, Ռատիքալ, 13 Փետրուար 2011
Հայացուց՝ Գրիգոր Կեօքճեան, Պէյրուզ

 **Դարձեալ Եկաւ Մեր Ապրիլ 24-ը**

Ամէն տարի կու գայ, դժբախտաբար: Ըստ «Սապահ» թերթին տուած տեղեկութեանց, Ազգային ապահովութեան խորհուրդը շատ կարեւոր «որոշումներ» ընդունելու է դեկտեմբերի մէջ կայացած իր ժողովին:

 Փրոֆ. Պասքըն Օրան, Ռատիքալ, 13 Փետրուար 2011
Հայացուց՝ Գրիգոր Կեօքճեան, Պէյրուզ

 **Դարձեալ Եկաւ Մեր Ապրիլ 24-ը**

Ամէն տարի կու գայ, դժբախտաբար: Ըստ «Սապահ» թերթին տուած տեղեկութեանց, Ազգային ապահովութեան խորհուրդը շատ կարեւոր «որոշումներ» ընդունելու է դեկտեմբերի մէջ կայացած իր ժողովին:

Առաջին, սփիւռքի եւ մասնաւանդ Ամերիկայի հայերուն հետհանդիպումները աւելի յաճախակի պիտի դարձուին, անոնց հրաւերներուն ընթացք պիտի տրուին: Անշուշտ որ պզտիկ հարցեր կրնան ծագիլ: Ջղագրգիռ դարձած սփիւռքը կրնայ Նոյնիսկ բնաւ հրաւեր չըրկել մեր դիւանագետներուն: Այս կացութեան մէջ շատ հետաքրքրական պիտի ըլլայ Տեղասպանութեան յուշատօներուն մեր մասնակցութիւնն ու Երեւանի Տեղասպանութեան յուշակոթողին ծաղկեպսակ գետեղելը:

Երկրորդ, Տեղասպանութեան բանաձեւեր որդեգրած երկիրներու դէմ կիրարկուող պոյքոթները պիտի առկախուին: Արդէն սկսած է այս վերջինին գործադրութիւնը: Քսանի հասնող այս երկիրներէն՝ Արժանթինի Նախագահը վերջերս հիւրընկալուեցաւ Նախագահ Ապտուլլա Կիլի կողմէ, իսկ Քանատայի առեւտուրի Նախարարին այցելութիւնը պիտի կայանայ յառաջիկայ քանի մը օրերուն:

Որքա՛ն Ազգային Ճիգեր Վատնուեցան...

Սակայն վստահ չեմ, թէ պիտի ցաւինք, թէ ոչ, որովհետեւ երկրորդին պարագային վատնած մեր գերմարդկային ճիգերը պարապի գացած պիտի ըլլան: Նոյնիսկ եթէ միմիայն Ֆրանսայի պարագային Նայինք, բաւարար է համոզուելու: Հայոց ցեղասպանութեան ուրացումի դէմ քրեական օրէնքի հարցը ֆրանսական Ազգային ժողովի օրակարգին բերուած էր հոկտեմբեր 2006-ին: Այդ շրջանին որքա՛ն ազգային ջանքեր վատնած էինք:

Զբօսավայրերու մուտքերուն գրած էինք՝ «Առանձիններուն եւ ֆրանսացիներուն մուտքը

արգիլուած է»: Ազգային ժողովի արդարութեան ենթայանձնախումբին կողմէ հրակիրուած փրոֆ. Եուսուֆ Հալաչօղլուն անդրադարձած էր կատարուելիք աշխատանքին կարելորութեան եւ՝ նշած, որ օսմանեան շրջանին հայեր աւելի ազատօրէն կ'ապրէին, քան թուրքերը...

Թուրքիոյ Ազգային ժողովին մէջ օրէնսդրական տենդագին աշխատանք մը սկսած էր. Տարբեր նահանգներէն երեսփոխաններ Հայոց ցեղասպանութեան եւ Ֆրանսայի դէմ բանաձեւեր յղած էին նախագահութեան: Երեսփոխաններուն տենդագին այս աշխատանքը արձագանգ գտած էր նաեւ Անգարայի քաղաքապետարանին մէջ եւս. պրն. քաղաքապետը սպառնացած էր, որ Ֆրանսայի մէջ բանաձեւը ընդունուելու պարագային, Անգարայի մէջ գտնուող Փարիզեան պողոտային վրայ պիտի կանգնեցնէր ալճերիական ցեղասպանութեան յուշակոթողը:

Գալով մեր պետութեան, անիկա ջնջած էր ֆրանսական «Ալքաթել» եւ «Տասսօ» ընկերութիւններուն հետ կնքուած զինուորական կազմաձևեր գնելու 449 միլիոն տուարի հասնող համաձայնութիւնները: Հոկտեմբեր 2006-ի այս բանաձեւերէն ո՛չ մէկը օրինականացաւ, ո՛չ ալ Ֆրանսայի դէմ առնուած պատժամիջոցները մնայուն դարձան: Սակայն այս պարագուծինը ուրիշ ձեւով մը լեցուեցաւ. Հրանդը սպաննուեցաւ երեք ամիս ետք, 19 յունուար 2007-ին:

Ամենէն Հատուն Երրորդ Որոշումն Է

ԱԱԽ-ին կողմէ տրուած որոշումներէն երրորդը նոյնութեամբ այսպէս կ'ըսէ.

«... առնուած քայլերուն ետին պիտի կանգնինք եւ Հայաստանի հետ ստորագրուած փրոթոգոլներուն տերը պիտի ըլլանք»: Հազիւ թէ պիտի ուրախանանք, բայց լուրին շարունակութիւնը հետեւեալը կ'ըսէ. «Սակայն, այնքան ատեն որ կովկասներու մէջ յառաջդիմութիւն չարձանագրուիր, անկարելի է ակնկալել որեւէ լուծում»:

Ա՛ն քեզ բան: Ըստ երեւոյթին, դարձեալ մեր բարեկամ Ազրայէճանին հաւատարմութիւն կը ցուցաբերենք: Այն «բարեկամ» Ազրայէճանին, որ կիպրական հարցին մէջ շարունակաբար մեզ կռնակէն դաշունահարած է, Պաքուի մէջ գտնուող թուրք նահատակներու յատուկ համալիրին վրայէն քակած-հանած է թրքական դրօշակն ու ձողը, փակած է մե՛ր իսկ կառուցած մզկիթը:

Մեզի յատուկ սովորութիւն դարձած է, ամեն անգամ որ Ապրիլ 24-ը մօտենայ, ամբողջ պետութեամբ շարժման կ'անցնինք, որպէսզի ամերիկեան Քոնկրեսը մեզի աննպաստ որոշում մը չընդունի: Այս վիճակին գագաթնակետին հասած էինք 2009 թուականին: Ապրիլ 24-ին ճիշդ երկու օր մնացած՝ Չուիցերիայէն յայտարարած էինք, որ երկու երկիրներուն միջեւ փրոթոգոլներու շուրջ համաձայնութիւն գոյացած է: Շատ յաջող «գործողութիւն» մըն էր: Շնորհիւ այս գիւտին՝ Օպաման կրցած էր խուսափիլ «Ցեղասպանութիւն» բառը գործածելէ եւ փոխարէնը ըսած էր «Մեծ եղեռն»:

Յաջորդ տարին, այսինքն 2010-ին, կրցանք ուտել ասոր տոկոսէն: Այս տարի ալ կրնանք շարունակել ուտել: Ենթադրելով, որ «Սապահ»ի մէջ լտեսած լուրը ճիշդ է, ԱՄԽ-ը կրնայ ուզած ժամանակ ժողովներ գումարել, սակայն տուած անհեթեթ որոշումներով չի կրնար Թուրքիան ծաղրանքի առարկայ դարձնել: Վարչապետ Էրտողան կրնայ չհաւնիլ արձան մը, սակայն, թալեպաններու նման, չի կրնար ոչնչացնել յուշակոթող մը, որ կոչուած է մարմնաւորելու Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ գոյացած բաժանումի ցաւը եւ բարելաւելու երկուստեք յարաբերութիւնները:

Այլանդակութիւնը քանդել, Վերանորոգութիւնը Արգիլել

Անսման մեր երկիրը, եթէ իսկապէս որոշած է այլեւս իր լուրջ սխալները սրբագրել, ընելիք շատ բան ունի.

- 1) Եթէ քանդել է նպատակը, նախ թող քանդէ 2000 թուականին Իգտիի մէջ բարձրացուած «Հայերու կողմէ գործադրուած ցեղասպանութեան արձանը»: Հինգ սուլիներէ բաղկացած այս արձանը կառուցուած է 43,5 մեթր բարձրութեամբ, որպէսզի կարելի ըլլայ գայն տեսնել սահմանի միւս կողմէն:
- 2) Կոթողներու քանդումը, ամէն պարագայի, եթէ լաւ բան մը չէ, մարդկային ամօթի մը նորագոյն մէկ պարագան թող կանխուի: Երբ ամբողջ Թուրքիան յորդած է ապօրինի շինութիւններով, պարզապէս հայ ձեռներեցի մը՝ Սեւան Նշանեանին կողմէ վերանորոգուած ըլլալուն համար Շիրինճէի այդ սքանչելի գիւղական տնակները պիտի քանդեն եւ Սեւանեանը բանտ նետեն:
- 3) Ձանձրոյթ պիտի ըլլայ, բայց Հրանդին սպանութեան ետին կանգնողները թող գտնուին: Սպանութեան չորրորդ տարին դատախազութիւնը որոշում տուաւ, որ հետաքննութիւն կատարէ ոստիկաններու եւ զինուորականներու հետ. ներքին գործոց նախարարը այդ մէկն ալ արգիլեց: Եթէ սպաննուողը հայ մըն է, ո՞ր մէկ օրէնքին յօդուածը ոճրագործը անպատժելի կը դարձնէ:
- 4) Եթէ այս բոլորը պիտի չիրականացուին մօտեցող ընտրութիւններու պատճառաբանութեամբ, վարչապետը առնուազն թող չարձարծէ այս «այլանդակ» հարցերը: Այդքան դժուար ըլլալու չէ, ընդդիմադիր ժողովրդահանրապետական կուսակցութեան ապիկարութիւններուն դիմաց վստահաբար ըսելիք շատ բան կ'ունենայ:

